02 Շաբաթաթերթ

Հայաստանի Հանրապետության ոստիկանություն

ISSN 1829-2526

Տպագրվում է 1990 թվականից

40 (1439) • 25 հոկտեմբերի 2019 թ. • Գինը՝ 150 դրամ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

Աշխատանքային խորհրդակցություն ոստիկանությունում

Հոկտեմբերի 19-ին տեղի ունեցավ ոստիկանության ընդլայնված կոլեգիայի նիստը, որի ընթացքում ամփոփվեցին ոստիկանության ծառայությունների եւ տարածքային մարմինների 2019 թվականի ինը ամիսների օպերատիվ-ծառայողական գործունեության արդյունքները:

Նիստը վարում էր ոստիկանության պետի ժամանակավոր պաշտոնակատար Արման Սարգսյանը: Մասնակցում էին ոստիկանության կոլեգիայի անդամները, կենտրոնական ապարատի, մարզային եւ տարածքային ստորաբաժանումների ղեկավարները:

Մինչ օրակարգին անցնելը նիստի մասնակիցները մեկ րոպե լռությամբ հարգեցին ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված Տիգրան Առաքելյանի հիշատակը: Այնուհետեւ Արման Սարգսյանը, ծառայողական պարտականությունները կատարելիս կյանքին վտանգ սպառնացող պայմաններում խիզախություն եւ անձնազոհություն ցուցաբերելու համար, «Ոստիկանությունում գերազանց ծառայության համար» կրծքանշան հանձնեց ՊՊԳՎ Արաբկիրի պահպանության բաժնի ոստիկան Արմեն Դակոբյանին:

2019 թվականի ինը ամիսների օպերատիվ-ծառայողական գործունեության արդյունքները ներկայացրեց ոստիկանության շտաբի պետ Արմեն Ղուկասյանը:

Զեկուցողը նշեց, որ ոստիկանությունը, ընդհանուր առմամբ, կատարել է իր առջեւ դրված խնդիրները, օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում վերահսկել է հանրապետությունում օպերատիվ իրավիճակը՝ պահպանելով կայուն հասարակական կարգն ու անվտանգությունը:

Ըստ վիճակագրական տվյալների՝ 2019 թվականի ինը ամիսների ընթացքում գրանցված հանցագործությունների ընդհանուր թվաքանակն աճել է 6,7%-ով կամ 1.192 դեպքով (2018 թ. 9 ամիս՝ 17.673, 2019 թ. 9 ամիս՝ 18.865):

էջ 2

64-ամյա կնոջ սպանությունը բացահայտվեց

Հոկտեմբերի 22-ի գիշերը ոստիկանության Էրեբունու բաժին հաղորդում ստացվեց, որ Վարդաշենի 2-րդ փողոցի շենքերից մեկում սպանություն է եղել: Դեպքի վայր մեկնած ոստիկանության ու քննչական կոմիտեի աշխատակիցները հիշյալ բնակարանում հայտնաբերեցին 64-ամյա տանտիրուհու դին: Դիակի զննությամբ մարմնին հայտնաբերվեցին կտրած-ծակած բազմաթիվ վնասվածքներ:

Հարուցվեց քրեական գործ:

Ոստիկանության եւ քննչական կոմիտեի ծառայողները ձեռնարկեցին ծավալուն օպերատիվ-հետախուզական միջոցառումներ ու քննչական գործողություններ: Համագործակցված աշխատանքի շնորհիվ պարզվեց սպանությունը կատարելու մեջ կասկածվողի ինքնությունը: Երեւանի բնակիչ, 46-ամյա տղամարդը բացատրական աշխատանքի շնորհիվ հոկտեմբերի 23-ին ներկայացավ ոստիկանության Էրեբունու բաժին:

Նախաքննությունը շարունակվում է:

Բացահայտվել է կոռուպցիոն հանցագործություն

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության ծառայողները պարզել են, որ Կոտայքի մարզի Մրգաշեն համայնքի նախկին ղեկավարը, օգտագործելով պաշտոնական դիրքը, 2015-2018 թթ. ընթացքում կայացրել է որոշումներ՝ Մրգաշենի մի շարք բնակիչների անվամբ, որպես սոցիալապես անապահով անձանց, Հայրենական, Արցախյան, ապրիլյան քառօրյա պատերազմների մասնակիցների, զոհված ազատամարտիկների ընտանիքների, ազատամարտիկների, նաեւ «Վերջին զանգի» տոնակատարության ու Ամանորի առթիվ դրամական օգնություններ տրամադրելու մասին, որոնց հիման վրա համայնքապետարանի բյուջեի ծախսերից ելքագրելով, այս պահին քննությանը հայտնի տվյալներով՝ մոտ 4 միլիոն 350 հազար դրամ, եւ կեղծելով գումարը ստացող անձանց ստորագրությունները՝ յուրացրել է մոտ 3 միլիոն 380 հազար դրամ:

Բացի այդ, 2019 թ. հոկտեմբերի 10-ին ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում մի քաղաքացուց հաղորդում է ստացվել, որ 2008 թ. վերջին Մրգաշեն համայնքի նախկին ղեկավարը համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման նշանակության հողատարածքն իրեն օտարելու համար որպես կաշառք պահանջել է 2000 դոլար, որից 1.700-ը նա տվել է 2009 թ. հոկտեմբերին, իսկ 170 հազար դրամը՝ դեկտեմբերին: Սակայն համայնքի նախկին ղեկավարը չի կատարել խոստումը, նաեւ չի վերադարձրել գումարը:

Հարուցվել է քրեական գործ:

Վնաս էր պատճառվել պետությանը

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում ՀՀ կադաստրի կոմիտեի պաշտոնատար անձանց խախտումների վերաբերյալ տեղեկություններ էին ստացվել: Ձեռնարկված միջոցառումներով պարզվել է, որ, ըստ այս պահին հայտնի տվյալների՝ անշարժ գույքի կադաստրային գնահատման եւ համակարգված դիտարկումների վարչության պաշտոնատար անձինք բնակավայրերի բազմաբնակարան շենքերի բնակարանների ու հողամասերի գների, հասարակական նշանակության անշարժ գույքի միջին շուկայական վարձավճարի համակարգված դիտարկումներ անցկացնելու համապատասխան բաժնի ուժերով գործառույթը կատարելու փոխարեն ձեռնարկել ու իրականացրել են նշված աշխատանքների գնման գործընթաց: Հաղթած ընկերության հետ 2018 թ. մարտի 6-ին կնքվել է 38 միլիոն 720 հազար դրամի պայմանագիր: Դրա շրջանակում, պատվիրատուի տրամադրած տեղեկատվության հիման վրա ընկերությունն ընդամենը կատարելով վերլուծություն՝ ներկայացրել է աշխատանքների կատարման հանձման-ընդունման ակտեր, որոնց հիման վրա ընկերությանը փոխանցվել է 15 միլիոն 488 հազար դրամ: Հետագայում գործարքի ակնհայտ անշահավետ լինելու պատճառով 2018 թ. հունիսի 25-ին պայմանագիրը լուծարվել է: Արդյունքում՝ պետությանը պատճառվել է առանձնապես խոշոր չափի նյութական վնաս, որն առաջացրել է ծանր հետեւանքներ:

Հարուցվել է քրեական գործ:

Չարաշահումներ մարզադպրոցում

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության ծառայողները, Շիրակի մարզային վարչության եւ Մուշի բաժնի քրեական հետախույզների հետ համատեղ, Գյումրիում կոռուպցիոն բնույթի առերեւույթ հանցագործության դեպք են բացահայտել:

Իրավապահները պարզել են, որ Գյումրիի աթլետիկայի մանկապատանեկան մարզադպրոցի տնօրենը, ըստ քննությամբ ձեռք բերված նախնական տվյալների, 2009-2019 թթ. ընթացքում, օգտագործելով պաշտոնեական դիրքը, վեց քաղաքացու, ոմանց՝ մարզիչ, ոմանց որպես հավաքարար է հրամանագրել, այդ թվում՝ իր որդուն ու կնոջը, որոնք փաստացի չեն ներկայացել աշխատանքի, սակայն նրանց անվամբ դուրս գրված մոտ 30 միլիոն դրամ կազմող աշխատավարձերը յուրացվել է:

Նախաքննությունը շարունակվում է:

Ապօրինի «նավագնացություն»

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում նախապատրաստված նյութերով փաստական տվյալներ են ձեռք բերվել, որ արտակարգ իրավիճակների նախարարության «Հիդրոօդերեւութաբանության եւ մթնոլորտային երեւույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի տնօրենը, չարաշահելով պաշտոնեական լիազորությունները, 2016-2018 թթ. մայիսից սեպտեմբեր ամիսներին որոշ անձանց թույլատրել է ՊՈԱԿ-ի հաշվեկշռում գտնվող նավը օգտագործել որպես զբոսանավ, եւ առանց պետական գրանցման իրականացվել է ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն:

Ըստ այս պահին քննությանը հայտնի տվյալների՝ զբոսաշրջիկների համար Սեւանա լճում կազմակերպված նավագնացությունների արդյունքում հավաքագրել են ընդհանուր 15 միլիոն դրամ:

Հարուցվել է քրեական գործ:

Չարաշահումներ Դիլիջանում

Չարաշահումների հետեւանքով քաղաքապետարանին 73 միլիոն դրամից ավելի նյութական վնաս էր պատճառվել:

էջ 3

«Հարազատական» կապեր

Շարունակեց մարել պարտքը՝ եղբոր վախից չակնարկելով անգամ տան վաճառքից վերցրած փողի մասին:

էջ 6

Հանցավորության կանխարգելում



Մարդը բնությունից չար չի ծնվում, այլ այդպիսին դառնում է սխալ դաստիարակության հետեւանքով:

էջ 6

Համակարգ

Աշխատանքային խորհրդակցություն ոստիկանությունում

Սկիզբը՝ էջ 1

Հանցագործությունների աճը գլխավորապես պայմանավորված է գողությունների, հատկապես՝ ոչ մեծ ծանրության (աճ՝ 645-ով), եւ ճանապարհային երթեւեկության կանոնները խախտելու (աճ՝ 165-ով) դեպքերի թվի աճով:

Չնայած հանցագործությունների թվի որոշակի աճին՝ պետք է փաստել, որ 2019թ. 9 ամիսների ընթացքում իրականացված լայնածավալ օպերատիվ-կանխարգելիչ միջոցառումների արդյունքում էականորեն՝ շուրջ հինգ անգամ, կրճատվել է դրա տեմպը (2019 թ. հունվար՝ 35,3%, սեպտեմբեր՝ 6,7%):

Դեպքերի աճը կարելի է պայմանավորել նաեւ այն հանգամանքով, որ դեռեւս նախորդ տարվանից, կապված իրավիճակի փոփոխության հետ, բարձրացել է քաղաքացիների վստահությունը ոստիկանության գործունեության նկատմամբ, եւ նրանք չեն խուսափում դիմել ոստիկանություն. եթե 2018 թ. 9 ամիսների ընթացքում ոստիկանության ստորաբաժանումներ ստացվել էր առերեւույթ հանցագործության մասին 147.780 հաղորդում, ապա 2019 թ. 9 ամիսների ընթացքում դրանց թիվն աճել է 29.721-ով կամ 20,1%-ով, կազմելով՝ 177.501):

Հանցավորության ընդհանուր կառուցվածքում շարունակվել է մարդու դեմ ուղղված հանցագործությունների տեսակարար կշռի նվազման միտումը (21,3%-ից 16,8%): Փոխարենը՝ նկատելի աճ է արձանագրվել սեփականության դեմ ուղղված հանցագործությունների տեսակարար կշռում (45,9%-ից 50,6%): Մանր հանցագործություններով բացահայտման արդյունավետությունը կազմում է 37,8%, առանձնապես ծանր հանցագործություններով՝ 56,8%:

Ըստ հիմնական հանցատեսակների՝ բացահայտման աշխատանքների արդյունավետության պատկերը հետեւյալն է՝ սպանություններով՝ 69,6%, դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու դեպքերով՝ 83,8%, այդ թվում՝ ծանր՝ 75,2%, ճանապարհային երթեւեկության կանոնների խախտման՝ 83,7%, այդ թվում՝ մահվան ելքով՝ 68,8%, զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկայի գործադրմամբ կատարված խուլիգանության՝ 65,9%, ավազակության՝ 80,0%, տրանսպորտային միջոց փախցնելու դեպքերով՝ 77,5%:

Համեմատաբար ցածր արդյունավետություն է գրանցվել խուլիգանության՝ 55,2%, կողոպուտի՝ 58,5%, գողության՝ 44,2%, այդ թվում՝ բնակարանային՝ 23,2%, յուրացման կամ վատնման՝ 58,8% դեպքերով:

Հայտնաբերվել է թմրամիջոցների իրացման 340 դեպք, ընդ որում՝ 12-ով աճել են առանձնապես խոշոր չափերի թմրամիջոցների իրացման բացահայտման դեպքերը:

Հայտնաբերվել է կոռուպցիոն բնույթի հանցագործության 931 դեպք, որոնցից 255-ը կաշառակերության դեպքեր են, 151-ը՝ պաշտոնեական դիրքն օգտագործելով՝ յուրացման, 99-ը՝ պաշտոնեական կեղծիքի, 215-ը՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու, 51-ը՝ պաշտոնեական լիազորություններն անցնելու եւ այլն:

Ոստիկանության ստորաբաժանումները պատշաճ հասարակական կարգ ու անվտանգություն են ապահովել ինչպես փետրվարի 17-ին, հունիսի 10-ին եւ սեպտեմբերի 29-ին մի շարք մարզերում կայացած համայնքի ղեկավարի եւ ավագանու անդամների ընտրությունների, այնպես էլ 4.094 զանգվածային միջոցառումների իրացման ժամանակ:

Անդրադառնալով ճանապարհային երթեւեկության անվտանգությանը՝ նշվեց, որ հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է 3444 ճանապարհատրանսպորտային պատահար, ինչի հետեւանքով զոհվել է 253 եւ մարմնական վնասվածքներ ստացել 4.959 մարդ:

Ամփոփելով կոլեգիայի նիստը՝ ոստիկանության պետի ժամանակավոր պաշտոնակատար Արման Սարգսյանն անդրադարձավ ներկայացված վիճակագրությանն ու մի շարք խնդիրների:

Հաշվի առնելով ոստիկանի ծառայության վտանգավորությունը՝ Արման Սարգսյանը հանձնարարեց առանձնահատուկ ուշադրություն դարձնել անձնակազմի ֆիզիկական ու մարտական պատրաստականությանը:

Առանձնապես կարեւորվեցին տեղերում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտը, միջանձնային ու գործընկերային հարաբերությունները: Ստորաբաժանումների պետերին հանձնարարվեց անձնակազմին ծանրաբեռնել ըստ օպերատիվ անհրաժեշտության՝ գնահատելով տարածքի օպերատիվ իրավիճակն ու հանցագործությունների դինամիկան:

Անդրադառնալով առանձին ծառայություններում առկա բացթողումներին ու կարգապահական խնդիրներին՝ Արման Սարգսյանն ընդգծեց՝ համակարգում պետք է լինեն միայն այնպիսի մարդիկ, որոնք իրենց ծառայությամբ պատիվ են բերում ոստիկանությանը:

Հանձնարարվեց նաեւ ընդլայնել սերտ համագործակցությունը իրավապահ մյուս կառույցների հետ:

Անդրադառնալով ճանապարհային երթեւեկության անվտանգությանը՝ Արման Սարգսյանը հանձնարարեց անհանդուրժող լինել յուրաքանչյուր կոպիտ խախտման նկատմամբ՝ ընդգծելով, որ յուրաքանչյուր նման խախտում կարող է կյանք արժենալ, եւ խախտումների արձանագրումն ու համարժեք գնահատականի արժանացնելը նախեւառաջ վարորդի, ուղեւորների ու հետիոտնի կյանքի եւ առողջության պահպանմանն է ուղղված:

Ոստիկանության պետի ժամանակավոր պաշտոնակատար Արման Սարգսյանը հույս հայտնեց, որ ոստիկանության բոլոր ծառայությունները կշարունակեն հետեւողական աշխատանքը՝ հանցավորության դեմ պայքարն առավել արդյունավետ կազմակերպելու, կարգապահական ու ծառայողական կարգապահությունն ամրապնդելու ուղղությամբ՝ ի նպաստ օրենքի, ի նպաստ Հայաստանի Հանրապետության:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Վարորդը սպանության փորձի մեղադրանքով կալանավորվել է

Հոկտեմբերի 3-ի գիշերը Նոր Խարբերդի Կենտրոնական փողոցից «Էրեբունի» բժշկական կենտրոն էին տեղափոխվել 35 եւ 20 տարեկան տղամարդ: Նրանց վրաերթի ենթարկած վարորդը, «Օպել»-ը թողնելով դեպքի վայրում, հեռացել էր:

Մեքենան տեղափոխվեց ճանապարհային ոստիկանության պահպանվող հատուկ տարածք: Ոստիկանության Շենգավիթի բաժնի քրեական հետախույզները օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ պարզեցին վարորդի ինքնությունը եւ դեպքի վերաբերյալ որոշ հանգամանքներ:

«Օպել»-ի 30-ամյա վարորդն ու վրաերթի ենթարկված անձինք դեպքից մի քանի րոպե առաջ վիճել էին, իրար ծեծել: Միջադեպից հետո վարորդը իր «Օպել»-ով, կյանքից զրկելու դիտավորությամբ, վրաերթի էր ենթարկել Նոր Խարբերդի Կենտրոնական փողոցում հավաքված մի խումբ անձանց:

Դեպքի առթիվ տարածքային քննչական բաժնում քրեական գործ հարուցվեց՝ երկու կամ ավելի անձանց սպանության փորձի ու խուլիգանության հատկանիշներով:

Հետագա միջոցառումներով Շենգավիթի քրեական հետախույզները հայտնաբերեցին «Օպել»-ի վարորդին ու կասկածանքով բերման ենթարկեցին բաժին: Նոր Խարբերդի բնակիչը ներկայացվեց դեպքի նախաքննությունը վարող մարմնին:

Նա կալանավորվել ու տեղափոխվել է քրեակատարողական հիմնարկ:

Նախաքննությունը շարունակվում է:

Թմրամիջոց-իրացնողը հայտնաբերվեց

Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի բաժանմունքի ծառայողները, իրացնելով օպերատիվ տվյալները, Մալաթիայի բաժնի գործընկերների հետ Բաբաջանյան փողոցում հայտնաբերեցին ու կասկածանքով բերման ենթարկեցին 50-ամյա մի տղամարդու: Նա իր «Մերսեդես»-ի սրահից ոստիկաններին ներկայացրեց սուբուտեքսի դեղահաբեր ու մարիխուանա:

Օպերատիվ միջոցառումները շարունակվեցին: Արդյունքում՝ Շենգավիթ վարչական շրջանում հայտնաբերվեց ու, «Մերսեդես» մակնիշի մեքենայով հանդերձ, բերման ենթարկվեց 38-ամյա մի տղամարդ: Նա եւս մեքենայից ոստիկաններին ներկայացրեց սուբուտեքսի կտորներ:

Օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ոստիկանները նոր տեղեկություններ ստացան, որ բերման ենթարկված տղամարդիկ թմրամիջոցը ձեռք են բերել նույն անձից: Երեւանի բնակիչ, 44-ամյա տղամարդը նույնպես հայտնաբերվեց եւ, թմրամիջոց իրացնելու կասկածանքով, բերման ենթարկվեց: Նրա բնակարանի խուզարկությամբ հայտնաբերվեցին կանեփի թփեր: Նա կալանավորվել է:

Օպերատիվ-քննչական միջոցառումները շարունակվում են:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Բացահայտվել է կողոպուտի դեպք

Հոկտեմբերի 3-ին ոստիկանության Կենտրոնական բաժնում հաղորդում էր ստացվել, որ ժամը 20.00-ին անհայտ անձը Արամի փողոցի սրճարաններից մեկի սեղանից բացահայտ հափշտակել է դրամապանակ, որի մեջ եղել է փող, վարորդական իրավունքի վկայական, սոցիալական եւ բանկային քարտեր:

Դեպքի վայր մեկնած ոստիկանները փուժողից հաղորդում են ընդունել՝ նրան պատճառվել էր շուրջ 120 հազար դրամի նյութական վնաս:

Փաստի առթիվ հոկտեմբերի 9-ին հարուցվել էր քրեական գործ:

Հանցագործությունը բացահայտելու ուղղությամբ Կենտրոնականի քրեական հետախույզների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ հոկտեմբերի 14-ին տվյալներ են ստացվել, որ արարքը հնարավոր է կատարած լինի Սարի թաղի 22-ամյա բնակիչը: Նույն օրը նա հայտնաբերվել է Նոր Արեշի 8-րդ փողոցում եւ, կողոպուտ կատարելու կասկածանքով, բերման ենթարկվել:

Նա տվել է խոստովանական ցուցմունք:

Ձեռնարկվում են միջոցառումներ գողոնը հայտնաբերելու ուղղությամբ:

Կատարվում է նախաքննություն:

Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Կոռուպցիան մեր կյանքում

Աշխարհի եւ ոչ մի երկիր չի կարող վստահ ասել, որ ապահովագրված է կոռուպցիայից: Ցանկացած երկրում կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու արդյունավետ միջոցներից են համարվում պետական մարմինների ծառայողների գործունեության հրապարակայնությունը, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողների կողմից, կարգապահական եւ էթիկական նորմերի հսկողությամբ, իրենց պարտականությունները բարեխիղճ կատարելը:

Բազմաթիվ երկրներում օրենքներ են ընդունել, որոնց պահպանումը յուրաքանչյուր պաշտոնյայի համար կարեւոր եւ անհրաժեշտ պայման է:

Շատ երկրների օրենսդրություններ պաշտոնյաներին արգելում են զբաղվել վճարովի այլ գործունեությամբ, որոշակի խմբի պաշտոնյաներ իրավունք չունեն անդամակցել քաղաքական կազմակերպություններին, ծառայողական տեղեկատվությունն օգտագործել սեփական շահերի համար, նվերներ ստանալ, պաշտոնյան իրավունք չունի նաեւ ֆինանսական հետաքրքրություններ ունենալ այն ընկերություններում, որոնց հետ առնչվում է՝ ծառայությունից ելնելով:

Որոշ երկրների քրեական օրենսգրքերով՝ կաշառակերության հոդվածները տարածվում են բոլոր քաղաքացիների, ոչ միայն պետական պաշտոններ զբաղեցնողների վրա:

Ներկայումս գրեթե բոլոր երկրների օրենքները կոռուպցիոն դրսեւորումները դիտում են որպես քրեորեն պատժելի արարք եւ ոչ միայն հետեւողական պայքար են տանում կոռուպցիոն դրսեւորումների դեմ, այլեւ ծրագրեր են մշակվում՝ պայքարն առավել արդյունավետ դարձնելու համար:

Մասնավորապես պետք է ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք կոռուպցիայի դեմ պայքարն անընդհատ կպահեն ուշադրության կենտրոնում: Անհրաժեշտ է հասարակությանը պարբերաբար տեղեկացնել բացահայտումների, դատավարությունների մասին: Շարքային քաղաքացին պետք է հասկանա, որ կոռուպցիայի վերացումը առաջին հերթին բխում է իր շահերից:

Պետք է կոտրել անպատժելիության կարծրատիպը, որը հասարակությունը վարակում է անկարողության եւ թուլության զգացողությամբ: Հասարակությունը հաճախ կորցնում է հույսը կոռուպցիայի դեմ պայքարում: Անհրաժեշտ է այնպես անել, որ անպատժելիության գաղափարը հերքվի, հակառակ դեպքում կոռուպցիայի դեմ պայքարը լուրջ չի ընկալվի:

Ոչինչ հասարակության վստահությունն այնպես չի խորտակում, ինչպես համոզվածությունը, որ հակակոռուպցիոն պայքարն ուղղված է միայն «ձկնիկների» դեմ: Փորձը վկայում է, որ կոռուպցիոն պայքարը կհաղթանակի այն դեպքում, եթե կարողանան բռնել «խոշոր ձկներին»: Նրանց անհրաժեշտ է հայտնաբերել եւ պատժել ոչ միայն որպես կաշառակերների, այլեւ հասարակության հավատը վերականգնելու համար:

Հակակոռուպցիոն մարտավարությունը պահանջում է վերլուծել կոռուպցիայի ընդունված ձեւերը եւ դրանց վերացման ուղղությամբ սահմանել նոր կանոններ: Երբեմն հենց որոշ օրենքներ են կոռուպցիայի հիմք դառնում: Նոր օրենքներ ու կանոններ անհրաժեշտ են այն դեպքում, եթե դրանք փոխում են ազդակներն ու խթանները, նվազեցնում իշխանության մոնոպոլիան, բացառում կամ սահմանափակում են իրավունքները, ուժեղացնում տեղեկատվական հոսքը:

Համակարգված կոռուպցիայի գոյության պայմաններում պայքարի ոչ մի գործողություն նշանակություն չի ունենա, եթե չփոխվի տեղեկատվական միջավայրը: Դրան հասնելու լավագույն միջոցը բնակչության եւ իշխանության միջեւ կապի պահպանումն է: Անհրաժեշտ է լայնորեն օգտագործել ԶԼՄ-ների գործոնը: Լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում պետք է լինի յուրաքանչյուր դեպք եւ արարք:

Վերջապես, հակակոռուպցիոն պայքարի կարեւորագույն պայմանն այն է, որ ամբողջ բնակչությունը՝ շարքային քաղաքացուց մինչեւ իշխանության գլուխ կանգնած անձինք, քաղաքական կամք դրսեւորեն այդ գործընթացում: Առանց իշխանության եւ ժողովրդի համատեղ գործողությունների՝ վերն ասվածը կմնա թղթի վրա, կդառնա թղթե օրենք:

Որքան էլ իշխանությունը միջոցներ ու ջանք ներդնի կոռուպցիայի դեմ պայքարում, եթե ժողովուրդը չհավատա եւ օգնության ձեռք չմեկնի, եւ հակառակը, եթե հասարակությունն ամեն ինչ անի, իսկ իշխանությունները կամք չդրսեւորեն ու չաջակցեն, պայքարը կոռուպցիա կոչվող սոցիալական հիվանդության դեմ դատապարտված է անհաջողության:

Հ. Պ.

Օպերատիվ

Բաղրամյանի ոստիկանները բացահայտում են

Հոկտեմբերի 4-ին ոստիկանության Բաղրամյանի բաժնում հաղորդում էր ստացվել, որ Քարակերտ գյուղի տներից մեկից գողություն է կատարվել:

Դեպքի վայր մեկնած օպերատիվ խումբը պարզեց, որ դանակով պատռել էին տան երկրորդ հարկի ննջասենյակում դրված ճամպրուկը եւ գողացել՝ դոլար ու դրամ:

Բաղրամյանի բաժնի քրեական հետախույզներից մի քանի ժամ պահանջվեց կատարվածի հանգամանքները պարզելու եւ հանցագործությունը կատարելու մեջ կասկածվող անձանց հայտնաբերելու համար: Նրանք բերման ենթարկվեցին բաժին ու խուզարկվեցին: Գողացված գումարի մի մասը հայտնաբերվեց:

Բերման ենթարկվածները ներկայացվել են դեպքի նախաքննությունը վարող մարմնին:

Նախաքննությունը շարունակվում է:

Անցյալի հետագիծը

Ոստիկանության Ճամբարակի բաժնի քրեական հետախույզները, իրացնելով ստացած օպերատիվ տվյալները, հոկտեմբերի 10-ին բերման են ենթարկել Շորժա գյուղում ապրող 26-ամյա մի երիտասարդի: Ըստ տեղեկությունների՝ նա նախկինում գողություններ էր արել:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումներով պարզվեց, որ երիտասարդը 2014 թվականի սեպտեմբերին մտել էր Դրախտիկ գյուղի տներից մեկն ու կահույք գողացել: Պարզվել է նաեւ, որ 2015 թվականին, դարձյալ Դրախտիկում, մեկ այլ առանձնատուն էր մտել եւ հափշտակել բենզաղող:

Տուժողներից հաղորդում է ընդունվել: Ձեռնարկվում են միջոցառումներ գողոնը հայտնաբերելու ուղղությամբ:

Դեպքերի առթիվ ոստիկանության Ճամբարակի բաժնում նյութեր են նախապատրաստվում:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Ենգավիթի ոստիկանների բացահայտումները

Ոստիկանության Շենգավիթի բաժնում տեղեկություններ էին ստացվել, որ Ներքին Շենգավիթի 11-րդ փողոցի 29-ամյա մի բնակիչ վարչական տարածքում գողություններ է անում: Ձեռք բերված տեղեկությունների իսկությունը ստուգելուց հետո, սեպտեմբերի 27-ին քրեական հետախույզները Ներքին Շենգավիթի 11-րդ փողոցի մի բնակարանից կասկածվողին բերման ենթարկեցին:

Նա խոստովանեց, որ սեպտեմբերի 25-ին գողացել է Եղիշե Թադեւոսյան փողոցում կայանված «ՎԱԶ-2106» մակնիշի մեքենայի մարտկոցը:

Հետագա միջոցառումներով ոստիկանները պարզեցին նաեւ, որ կասկածվողը մեկ ամիս առաջ, օգտվելով Ներքին Շենգավիթի 11-րդ փողոցի արհեստանոցի դուռը բաց լինելու հանգամանքից, փող էր գողացել:

Գողության դեպքերով նախապատրաստվում են նյութեր:

Չարաշահումներ Դիլիջանում



Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության կոռուպցիայի եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման վարչության ծառայողները, օպերատիվ տեղեկությունների հիման վրա, Դիլիջանի բաժնի ծառայողների հետ համատեղ փաստական տվյալներ են ձեռք բերել, որ Դիլիջանի քաղաքապետն օգտագործելով պաշտոնեական դիրքը՝ Դիլիջանի նախկին «քաղսովետի» բազմահարկ շենքում տարբեր հիմունքներով տարածքներ զբաղեցրած պետական գերատեսչությունների եւ այլ տնտեսվարողների խնդրանքով՝ նշված շենքը վերանորոգելու պատրվակով 2006 թ. փետրվարի 28-ի որոշմամբ հայտարարել է շուկայականից անհամեմատ ցածր՝ տարեկան, այս պահին քննությանը հայտնի տվյալներով, մոտ 1 միլիոն 300 հազար դրամ մեկնարկային գնով, 40 տարի ժամկետով շենքը վարձակալությամբ տրամադրելու աճուրդ՝ մասնակիցների կողմից շենքի կապիտալ վերանորոգման ծրագիր ներկայացնելու եւ իրականացնելու պարտադիր պայմանով:

Այնուհետեւ քաղաքապետը, ըստ նախնական տվյալների, համաձայնության գալով քաղաքապետարանի ֆինանսական բաժնի պետի հետ՝ աճուրդից երեսուն օր առաջ նրա դստեր անվամբ հիմնադրված սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն աճուրդում հաղթող ճանաչելու նպատակով կազմակերպել են ձեւական աճուրդ, որի շրջանակներում ֆինանսական բաժնի պետը, աճուրդին իբրեւ երկրորդ ընկերության մասնակցությունն ապահովելու համար, նախօրոք պայմանավորվածություն է ձեռք բերել ծանոթ մեկ այլ ընկերության հիմնադիր տնօրենի հետ՝ առաջարկելով ստորագրել եւ կնքել աճուրդի անցկացմանը հայտ ներկայացնելու եւ մասնակցելու վերաբերյալ կեղծ փաստաթղթերը, ապա հանձնաժողովի անդամների օժանդակությամբ պաշտոնական փաստաթղթերում ակնհայտ կեղծ տեղեկություններ մտցնելով՝ մրցութավարի փոխարեն կեղծ ստորագրությամբ կազմել ու հաստատել են աճուրդի նիստ անցկացնելու վերաբերյալ պաշտոնական փաստաթղթեր, որոնց հիման վրա էլ 2006 թ. ապրիլի 28-ին կնքված առուվաճառքի պայմանագրով՝ անշարժ գույքը տարեկան, այս պահին քննությանը հայտնի տվյալներով՝ մոտ 1 միլիոն 400 հազար դրամով 40 տարի վարձակալության իրավունքով, հանձնել են քաղաքապետարանի ֆինանսական բաժնի պետի աղջկա անվամբ հիմնադրված ընկերությանը:

Դրանից հետո քաղաքապետը պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով, նշված ընկերության կողմից պայմանագրով նախատեսված հիշյալ շենքի վերանորոգման համար որեւէ ներդրում չկատարելու պայմաններում, չի վերանայել կամ լուծել համայնքի համար ակնհայտ անշահավետ, տարիներ շարունակ գործած վարձակալության պայմանագիրը, որի արդյունքում համայնքային սեփականություն հանդիսացող տարածքների ենթավարձակալներից 2006 թվականի հունիսի 30-ից մինչեւ 2018 թվականի սեպտեմբերի 26-ը, քննությանն այս պահին հայտնի տվյալներով՝ հավաքագրված ընդհանուր մոտ 88 միլիոն 800 հազար դրամից քաղաքապետարանի բյուջե է փոխանցվել մոտ 15 միլիոն 600 հազար դրամ, ինչի հետեւանքով քաղաքապետարանին շուրջ 73 միլիոն 200 հազար դրամի նյութական վնաս է պատճառվել:

Հարուցվել է քրեական գործ:

Գոռ ՎԱՆՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Օպերատիվ

«Շրավեճեր»

Ամիսներ առաջ «շտապօգնության» մեքենայով Գավառի բժշկական կենտրոն տեղափոխվեց Կարմիրգյուղ գյուղի բնակիչ Արամայիս Բարսեղյանը՝ գանգուղեղային շրջանի սալջարդով: Ահազանգով հիվանդանոց մեկնեց Գավառի բաժնի օպերատիվ խումբը: Կատարվածով նախապատրաստվեցին նյութեր, եւ պարզվեց եղելությունը:

Այդ առավոտ Արամայիսի համագյուղացի Գեւորգը որոշեց ջրել իր հողամասը: Բահով ջրի հունը ուղղեց դեպի իր հողակտոր: Այդ ընթացքում Գեւորգին մոտեցավ Արամայիսը եւ տեսնելով, որ ջրի հունը փոխված է՝ ասաց, որ հողամասը ջրելու հերթը իրենն է եւ առանց պատասխանի սպասելու բահով վերականգնեց «արդարությունը»: Համագյուղացիները վիճեցին. ինչի հետեւանքով Գեւորգը բահով խփեց Արամայիսի գլխին, ոտքերով՝ մարմնին:

Ջրավեճն ավարտվեց: Արամայիսին պատճառվեց թեթեւ վնաս՝ առողջության կարճատեւ քայքայումով: Դիմողը, սակայն, բողոքը չի պնդել, եւ քրեական գործի հարուցումը մերժվել է:

Հողամասը ոռոգելու հարցի շուրջ վիճեցին նաեւ Երանոս գյուղում ապրող Մխիթար Գալստյանը եւ Աբրահամյան ընտանիքի անդամները: Մխիթարը գյուղի ջրաբաշխն էր: Նա էր ոռոգման ջուրը տալիս գյուղացիներին: Ջրաբաշխը այդ օրը ջուրը տվել էր մեկ այլ համագյուղացու, ինչը դարձել էր Աբրահամյանների դժգոհության պատճառը: Գայանե, Արամ եւ Հովաննես Աբրահամյանները փայտով, ձեռքերով ու ոտքերով խփեցին Մխիթարին:

Կատարվածի մասին տեղեկացան ոստիկանության Մարտունու բաժնի աշխատակիցները: Նյութերի նախապատրաստման ընթացքում նշանակվեց դատաբժշկական փորձաքննություն, որի եզրակացության համաձայն՝ Մխիթարին պատճառվել էր թեթեւ վնաս՝ առողջության կարճատեւ քայքայումով:

Կատարվում է քննություն:

«Չմարսված» մերժում

Արթիկ քաղաքի բնակիչ Համլետ Ավետիսյանը ՍՊ ընկերություններից մեկում վարորդ էր: Օրվա ընթացքում Արթիկից ուղեւորներ էր տեղափոխում Երեւան եւ՝ հակառակը:

Ամիսներ առաջ համաքաղաքացի Մանվել Բաղդասարյանը Համլետին խնդրեց պահեստամաս փոխանցել ընկերոջը: Համլետը, սակայն, մերժեց Մանվելին. նրան ընդառաջելու ցանկություն չուներ: Մանվելը վիրավորվեց համաքաղաքացուց, տեղը չէր գտնում: Իսկ մեքենայի պահեստամասն ընկերոջը փոխանցելն անհրաժեշտ էր: Ճիշտ է, Մանվելը մեկ այլ մեքենայով ուղարկեց, բայց զայրույթը չմեղմվեց: Ժամեր շարունակ նյարդային վիճակում էր, սպասում էր Համլետի վերադարձին: Ուզում էր պարզել մերժելու պատճառը: Մի խոսքով, երբ Համլետը երեկոյան վերադարձավ Արթիկ, Մանվելը նորից մոտեցավ նրան:

Վիճեցին. Մանվելը բռունցքով խփեց Համլետի դեմքին, քաշքշեց, ինչից Համլետը հավասարակշռությունը կորցնելով՝ ընկավ ու վնասեց ձեռքը:

Կատարվածի մասին տեղեկացան ոստիկանության Արթիկի բաժնի աշխատակիցները: Նյութերի նախապատրաստման ընթացքում կողմերը բացատրություններ տվեցին: Նշանակվեց դատաբժշկական փորձաքննություն, որի եզրակացության համաձայն՝ Համլետին պատճառվել էր միջին ծանրության վնաս: Դիմողը, սակայն, բողոքը չի պնդել, եւ քրեական գործի հարուցումը մերժվել է:

Կարինե ՄՈՒՐԱԴՅԱՆ

Ոտքերի՞ց մարդկությանը բժշկական գիտելիքներ

Սկիզբը՝ նախորդ համարում

Գաղտնիքների մի ամբողջ հետաքրքիր շարք է ի հայտ գալիս հին եգիպտական ձեռագրերից. ինչպե՞ս եւ ի՞նչ տեխնոլոգիայով են մշակել դիակները եւ պահպանել օրգանները: Գիտնականներն ու հետազոտողները ձեռագրերն ուսումնասիրելիս եկել են եզրակացության, որ հին եգիպտացի հեքիմները մահացածի օրգանները փոխպատվաստել են ողջերին, հատկապես՝ փարավոններին: Քանի որ միայն եգիպտոսի հարուստները կարող էին իրենց մարմինը զմռսել, ապա չի բացառվում, որ հենց նրանք էին լրացնում դոնորական բանկը: Փարավոնի օրգանները կարող էին օգտագործել միայն ապագա փարավոնների համար: Իհարկե, չի բացառվում, որ դոնոր կարող էին լինել նաեւ սովորական քաղաքացիները, եթե առողջ օրգանները չէին բավարարում:

Եթե Հին Եգիպտոսում երկարակեցության գաղտնիքը փնտրում էին բացառապես վիրաբուժական մեթոդների կիրառմամբ, ապա Հին Չինաստանում եւ Հնդկաստանում հեքիմները կենտրոնացած էին թերապիայի վրա եւ ստիպում էին, որ օրգանիզմը ինքնապայքար մղի հիվանդության դեմ:

Արեւելյան գիտնականները կարծում են, որ անհրաժեշտ է օրգանիզմում արթնացնել ներքին էներգետիկ աղբյուրները, եւ մարմնի տերը ոչ միայն կարող է բուժվել ցանկացած հիվանդությունից առանց բժշկի միջամտության, այլեւ կարող է բավական երկար ապրել: Տիբեթյան վարդապետները դավանում են նման կենսակերպի: Եվ քիչ չեն փաստերը, երբ այդ վարդապետները պարզապես մնում են օդում՝ առանց հենման կետի:

Շնորհիվ կենսաբանական դաշտի եւ տիեզերքի հետ կապի տիբեթյան վանականները կարող են ստիպել օրգանիզմին ինքնուրույն պայքարել հիվանդությունների դեմ:

Ցանկացած հիվանդության դեմ բուժման էությունը մեդիտացիան է.

մարդն ընկղմվում է ինքն իր մեջ, մարմինը տաքանում է, եւ որոշ ժամանակ անց հիվանդությունից հետք չի մնում, իսկ մարմնի տերը վերականգնում է գիտակցությունը: Դրա համար էլ այստեղ տաք հագուստ չեն կրում: Հատուկ այցելուի համար նրանք փորձարկում են կազմակերպել՝ թաց սավանով փաթաթել են վանականներից մեկին, եւ նա սկսել է մեդիտացիան: Վայրկյանների ընթացքում ականատեսների աչքի առաջ սավանը չորացել է: Տիբեթյան վանականների երկարակեցությունը մինչ օրս զարմացնում է շատ գիտնականների: Նրանք բուսակեր են եւ, միեւնույն ժամանակ, ծանր, ֆիզիկական աշխատանք են կատարում:

Հին Չինաստանում հավատում էին, որ ամեն ինչ ազդում է մարդու առողջության եւ երկարակեցության վրա: Դրա համար նույնիսկ ծառեր էին տնկում եւ ուղիներ հարթում բացառապես էներգետիկ հոսքերի ուղղությամբ, կերակուրներ պատրաստելիս օգտագործում էին հրաշքներ գործող ժեռնենը:

Տիբեթյան պրակտիկան տեսնում ենք հնդկական յոգերի մոտ, որոնք իրենց գործունեությամբ ապացուցում են, որ մարդու մարմինը շատ բաների է ընդունակ, կարող է նաեւ երկար գոյատեւել, եթե տերը գիտի՝ ինչպես վարվել դրա հետ: Այստեղից է սկզբնավորվել ժամանակակից պլաստիկ վիրաբուժությունը՝ որպես արտաքինը շտկելու միջոց:

Կնճիռները վերացնելու համար պարզապես կտրում էին այցելուի մաշկի մի հատվածը, ապա մաշկը ձգում էին եւ կպցնում մեղրամոմով: Անհայտ է, թե ինչքանով էր արդյունավետ նման միջոցը, բայց շատ հնդիկ ռաջաներ ապրում էին բավական երկար եւ անգամ մահից հետո ունեին երիտասարդ արտաքին:

Երկարակեցության աղբյուրների փնտրտուքը շարունակվում է, չնայած ժամանակակից գիտնականները նախապատվությունը տալիս են ժառանգականությանը եւ կարծում, որ հենց այստեղ պետք է փնտրել ծերության պատճառները: Վերջերս կարծես հայտնաբերել են ծերության գործընթացի համար պատասխանատու գենը, բայց արդյո՞ք այն ինչ-որ կերպ կկիրառվի գործնականում:

Ամեն դեպքում չի կարելի թեթեւամտորեն մոտենալ այս հարցին, ըստ էության, մարդկությունը դեռեւս չի գտել սովորական միջանցիկ քամուց առաջացած հիվանդություններից բուժվելու կարողությունը:

Անմահությունը կամ շատ երկար ապրելը կարող է հանգեցնել հիմնախնդիրների՝ մարդկության բազմացում, բնական ռեսուրսների չբավարարում, ինչպես եւ սերունդների հակամարտություն, գոյատեւման մշտական պատերազմներ...

Պատրաստեց Տաթեւ ՄԵԺՈՒՆՑԸ

Ավարձալի ամփոփագիր

Չգողացված գողոն

45-ամյա մի կին հաղորդում է տվել, որ ցերեկը բացակայել է տնից՝ տանը թողնելով անչափահաս երկու երեխաներին եւ իր ծանոթ 19-ամյա Տաթեւիկին, որն էլ, ըստ կնոջ ենթադրության, ննջասենյակի պահարանից գողացել է դրամապանակը՝ 114 հազար դրամով:

Նույն օրը Տաթեւիկը հրավիրվել է բաժին եւ բացատրություն տվել, որ ինքն է դրամապանակը պահարանից վերցրել եւ գցել հյուրասենյակի բազմոցի տակ:

Դրամապանակը հայտնաբերվել է, փողն էլ՝ մեջը:

Մնում է պարզել Տաթեւիկի արարքի իմաստը:

Հայտնի կինոյի պես

Օրեր առաջ հաղորդվել էր, որ գյուղ տանող ճանապարհին խառը վերքերով, անգիտակից վիճակում հայտնաբերել է 60-ամյա մի տղամարդ:

Երբ վերջապես տղամարդը եկել էր գիտակցության, ոստիկաններին հայտնել է, որ այդ օրը գնել է բժշկական սպիրտ եւ ուտելիք, դաշտում կերուխում սարքել, ինչից հետո իրեն վատ է զգացել, նստել է ճամփեզրի բետոնե արգելապատնեշին, գիտակցությունը կորցրել ու ընկել է:

Նպատակին հասավ

56-ամյա մի կին հաղորդում է տվել, որ գիշերը տանը 64-ամյա ծանոթ տղամարդը փորձել է իր կամքին հակառակ սեռական հարաբերություն ունենալ իր հետ, սակայն իր կամքից անկախ հանգամանքներում հանցանքն ավարտին չի հասցրել: Դեպքը, սակայն, հոռետեսական ավարտ չի ունեցել: Ըստ կնոջ պատմածի՝ ծանոթը փորձը կրկնել է նաեւ կեսօրին. իր կամքին հակառակ բռնություն գործադրելով, այնուամենայնիվ, սեռական հարաբերություն է ունեցել իր հետ:

Նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն: Մնում է պարզել, թե ինչու է ձախողվել առաջին փորձը:

Չրիկ պատերազմ, կծան ընտանիք

Հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ այտի եւ նախաբազկի կծած վերքերով ընդունել են 52-ամյա մի տղամարդու:

Մեկնածն ոստիկանները պարզել են եղելությունը: 4-րդ հարկում ջրի հարցի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ 28-ամյա հարեւանը բռնել է տղամարդու պարանոցից ու կծել այտը: Տղամարդը փորձել է կացնով խփել երիտասարդ հարեւանին, սակայն այդ պահին միջամտել է նրա 22-ամյա կինը: Հետեւելով ամուսնու օրինակին՝ նա կծել է տարեց հարեւանի ձեռքը՝ պատճառելով վնասվածք:

Սեռախաբություն

Յուրօրինակ ահազանգ է ստացվել 25-ամյա մի երիտասարդից: Նա հայտնել է, որ տերմինալից գումար է փոխանցել մի աղջկա հաշվեհամարին՝ նրա կողմից մատուցվող սեքսուալ բնույթի ծառայություններից օգտվելու համար, սակայն վերջինիս հետ կապի դուրս գալ չի հաջողվում:

Մեկնածն ոստիկանները պարզել են, որ երիտասարդը Արմինե ներկայացած անձի տրամադրած հաշվեհամարին մաս-մաս փոխանցել է 31 հազար դրամ, ենթադրյալ Արմինեն էլ խաբեությամբ տիրացել է գումարին:

Ձեռնարկվում են միջոցառումներ Արմինեի անձը պարզելու եւ հայտնաբերելու ուղղությամբ: Իսկ երիտասարդը դեռ սպասում է:

www.police.am

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ հոկտեմբերի 17-ից 24-ն ընկած ժամանակահատվածում ձեռնարկված օպերատիվ-փնտրողական եւ բացատրական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել կամ կամավոր ներկայացել է 30 հետախուզվող:

Հայտնաբերվածներից 2-ը հետախուզվում էր դիտավորությամբ առողջությանը թեթեւ վնաս պատճառելու, 1-ը՝ ծեծի եւ սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքի, 2-ը՝ գողության, 1-ը՝ խարդախության, 2-ը՝ յուրացնելու կամ վատնելու, 1-ը՝ գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու, 1-ը՝ կեղծ ձեռնարկատիրության, 1-ը՝ խուլիգանության, 1-ը՝ ինքնիրավչության, 1-ը՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու համար:

Հայտնաբերվել է այլ երկրների կողմից 10 հետախուզվող:

Արձանագրվել է 89 ճանապարհատրանսպորտային պատահար. 10 մարդ զոհվել է, 115-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Արձանագրվել է վրաերթի 17 դեպք. 1 մարդ զոհվել է, 16-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Վավերագրություն

Արդյունավետության չափորոշիչներ

Ցանկացած երկրում, նույնիսկ՝ ամենաժողովրդական հասարակարգերում, ոստիկանությունն անկարող է արդյունավետ պայքար մղել հանցավորության դեմ, եթե ոստիկանի յուրաքանչյուր գործողություն սահմանափակվի հստակ կանոններով: Հանցավորությունը զարգացող, անընդհատ ձեւափոխվող երեւույթ է, եւ դրա դեմ պայքարը նույնպես պետք է լինի փոփոխվող եւ տվյալ ժամանակին ու իրավիճակին համապատասխան: Բնականաբար, ոստիկանության գործողություններն անհրաժեշտ է մշտապես հսկողության տակ պահել, քանի որ ուժ կիրառելու իրավասությունը երբեմն կարող է հանգեցնել ոչ իրավաչափ գործողությունների:

Ամերիկացի հետազոտող Ն. Ֆենոնը նշում է, որ ոստիկանները դեպքի վայրում երբեմն բախվում են աննախադեպ իրավիճակների, որոնց հակազդելու կոնկրետ կանոններ նախատեսված չեն, եւ նման դեպքերում ոստիկանները գործում են իրավիճակի թելադրանքով:

Այդպիսի իրավիճակներում ոստիկանին ազատ գործելու հնարավորություն ընձեռելը նախեւառաջ կապահովի իրավապահի, ինչպես եւ դեպքի վայրում գտնվողների անվտանգությունը. գործողությունների կաշկանդվածությունը կարող է անցանկալի միջադեպերի պատճառ դառնալ: Որքան էլ տարօրինակ թվա՝ որոշ զարգացած երկրներում՝ Ավստրիայում, Անգլիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, ԱՄՆ-ում, Ճապոնիայում քաղաքացիների շրջանում անցկացված հարցումների համաձայն՝ մասնակիցների 60%-ը համոզված է, որ հանցավորությունը զսպելու համար անհրաժեշտ է ոչ թե համապատասխան սոցիալական ծրագրեր կյանքի կոչել, այլ պարզապես մեծացնել ոստիկանության լիազորությունները: Հարցման մասնակիցների մեծամասնությունը գտնում է, որ ոստիկանները պետք է առավել խիստ միջոցների դիմեն, եթե կարծում են, որ դրա անհրաժեշտությունը կա: Անվիճելի է, որ, անկախ ոստիկանությանը տրված լիազորություններից, միայն իրավապահների ջանքերով հանցավորության դեմ պայքարը չի կարող արդյունավետ լինել: Հանցագործությունները զսպելու գործում անելիք ունեն նաեւ հասարակության լայն խավերը, պետական ու հասարակական տարբեր կազմակերպություններ:

Ինչ վերաբերում է բուն ոստիկանության գործունեության արդյունավետությանը, ապա տարբեր երկրներում դրա մակարդակը ստուգելու բազմաթիվ չափորոշիչներ են գործում: Միայն հանցավորության աճով ոստիկանության աշխատանքը գնահատելը, մեղմ ասած, սխալ մոտեցում է. վիճակագրությունը փաստում է, որ զարգացած երկրներում, որտեղ սոցիալական լարվածություն չկա, բնակչության հիմնական մասը բարեկեցիկ ու ապահով կյանքով է ապրում, հանցագործությունները վերջին տարիներին ոչ թե նվազում են, այլ՝ հակառակը:

Արեւմուտքում ոստիկանության գործունեության արդյունավետությունը գնահատելու համար տարաբնույթ ցուցանիշներ են համադրվում, հաշվի են առնվում բազմաթիվ գործոններ: Մասնավորապես՝ նախազգուշացումները, նախկինում հանցավոր արարքներ թույլ տվածների նկատմամբ հսկողություն իրականացնելու վերաբերյալ դատարաններ ուղարկված միջնորդությունները, ապօրինի զենք պահողների բացահայտումները, զենք-զինամթերքի եւ թմրանյութերի առգրավումը, բնակչության շրջանում իրականացված բացատրական աշխատանքները եւ այլն: Հաշվի է առնվում նաեւ պարեկային ծառայության եւ զանգվածային միջոցառումների ժամանակ հասարակական կարգը պահպանելուն ուղղված միջոցառումների արդյունավետությունը:

Ոստիկանության գործունեության արդյունավետությունը չափվում է նաեւ նյութական առումով՝ որքան գումար է ծախսվել, եւ դրա դիմաց ոստիկանությունը որքան նյութական վնաս է կարողացել վերականգնել: Օրինակ, ԱՄՆ-ում Հետաքննությունների դաշնային բյուրոյի աշխատանքը գնահատելիս հաշվի է առնվում, որ մոտ մեկ միլիարդ դոլար բյուջե ունեցող այս կառույցն առնվազն երկու միլիարդ դոլարի օգուտ է տալիս պետությանը:

Ինչ խոսք, ոստիկանների գործունեությունը գնահատելիս, այնուամենայնիվ, կարեւոր չափորոշիչը արձանագրված հանցագործությունների բացահայտման ցուցանիշն է:

Հանցագործությունը համարվում է բացահայտված, եթե պարզվել է հանցանք կատարողի անձը (անկախ նրանից՝ ձերբակալվա՞ծ է, թե՞ գտնվում է հետախուզման մեջ), եթե իրավախախտը բռնվել է դեպքի վայրում, եթե ոստիկանությունը ապացույցների կամ խոստովանության հիմքով համոզված է կասկածյալի մեղավորությանը:

Բացահայտման տոկոսը որոշվում է հետեւյալ բանաձեւի օգնությամբ՝ (A-B) x 100(C-D), որտեղ A-ն բացահայտված հանցագործությունների ընդհանուր թիվն է, B-ն՝ ակնհայտ պայմաններում կատարված հանցագործությունների թիվը, C-ն՝ կատարված հանցագործությունների ընդհանուր թիվը, D-ն՝ վերլուծության պահին չբացահայտված հանցագործությունների թիվը:

Որպես կանոն, տարբեր ծանրության հանցագործությունների դեպքում հաշվարկը կատարվում է առանձին: Վերջին տասնամյակում արձանագրված հանցագործությունների բացահայտման ցուցանիշն արեւմտյան մի շարք երկրներում հետեւյալ պատկերն ունի. Ավստրիա՝ 45%, Բելգիա՝ 20%, Մեծ Բրիտանիա՝ 30%, Գերմանիա՝ 50%, Իտալիա՝ 17%, Կանադա՝ 47%, Հոլանդիա՝ 20%, Նորվեգիա՝ 20%, ԱՄՆ՝ 22%, Ֆինլանդիա՝ 75%, Ֆրանսիա՝ 40% եւ այլն:

Ընդհանուր հանցագործությունների մեջ նշված ցուցանիշներից մոտ 10-15%-ով ավելի են ծանր եւ վտանգավոր հանցագործությունների բացահայտումները: Վերջին տարիներին փորձ է արվում առավել կատարելագործել հանցագործությունների բացահայտման ուղղությամբ տարվող աշխատանքի արդյունքների վերլուծության մոտեցումը: Հիմնական նպատակն է՝ ապահովել գնահատման առավել օբյեկտիվ մոտեցում: Մասնավորապես՝ Մեծ Բրիտանիայի մասնագետները քրեական ոստիկանության ստորաբաժանումների եւ կոնկրետ ծառայողների գործունեությունը գնահատելու համար հաշվի են առնում ոչ միայն կոնկրետ ժամանակահատվածում բացահայտված հանցագործությունների քանակը, այլեւ դրանց բացահայտման հետ կապված դժվարությունները, ինչի համար նպատակահարմար է ստեղծել եւ կիրառել հատուկ չափորոշիչներով բանաձեւ: Այլ կերպ ասած՝ բացահայտումների ցուցանիշները գնահատելիս անհրաժեշտ է անհատական մոտեցում ցուցաբերել:

Քանի որ հանցագործության բացահայտման գործում մեծ ներդրում ունեն ե՛ւ հետախույզները, ե՛ւ քննիչները, ե՛ւ փորձագետները, տեղեկատվական բազաների հետ աշխատող ծառայողները, հերթապահները եւ այլն, ապա օբյեկտիվորեն դժվար է գնահատել բացահայտման աշխատանքներում ներգրավված յուրաքանչյուր ծառայողի աշխատանքի արդյունավետությունը եւ ներդրումը բացահայտման գործում:

Ոստիկանության աշխատանքները գնահատելիս որպես չափորոշիչ դիտվում են նաեւ աշխատանքների օպերատիվությունը, կասկածյալի ձերբակալության ժամկետները: Արեւմուտքում, օրինակ, ոստիկանները դեպքի վայր են ժամանում ահազանգը ստանալուց հինգ-տասը րոպե անց, իսկ ինչ վերաբերում է ձերբակալություններին, ապա ԱՄՆում, Կանադայում, Գերմանիայում, Իտալիայում եւ այլ երկրներում ձերբակալությունների 30%-ը կատարվում է ահազանգը ստանալուց կես ժամ անց, մոտ 50%-ը՝ երկուսուկես ժամ անց, իսկ մեկ շաբաթվա ընթացքում՝ 2/3-ը:

Այս հարցում արդյունավետության ցուցանիշը պարզելու համար կիրառվում է հետեւյալ բանաձեւը՝ K=A/B, որտեղ A-ն դատարանի կողմից հիմնավորված ձերբակալություններն են, B-ն՝ իրավախախտումների հետ կապված ահազանգերը:

Հանցագործությունների աճը բազմաթիվ օբյեկտիվ եւ սուբյեկտիվ երեւույթներով է պայմանավորված, եւ դրան արդյունավետ հակազդելը ոստիկանության առավել արդյունավետ գործունեությունը պայմանավորված չէ ո՛չ ժողովրդավարության աստիճանով, ո՛չ տոտալիտար ռեժիմների գոյությամբ: Օրինակ, միջազգային փորձագետների գնահատմամբ, քրեական առումով անվտանգ երկրների շարքում են Ճվեդիան, Վիետնամը, Մեծ Բրիտանիան եւ Հյուսիսային Կորեան:

Միեւնույն ժամանակ, ԱՄՆ-ը, որտեղ յուրաքանչյուր երկու վայրկյանում ծանր հանցագործություն է արձանագրվում եւ 100 հազար բնակչին բաժին ընկնող սպանությունները՝ 4-5, բռնաբարությունները՝ 7, ավազակային հարձակումները՝ 10 անգամ ավելի շատ են, քան Արեւմտյան Եվրոպայի երկրներում, դասվում է վտանգավոր երկրների շարքին, սակայն դժվար թե ամերիկացիները ցանկանային իրենց երկրում ունենալ իրավակարգն ամրապնդելու վիետնամական տարբերակ:

Հանրապետության ճանապարհներին

Հոկտեմբերի 21-ին Երեւանի Տերյան եւ Մոսկովյան փողոցների խաչմերուկում իրար են բախվել «Սատուռն Աստրա» մակնիշի ավտոմեքենա եւ «Սուզուկի» մակնիշի մոպեդ: Մոպեդի վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հոկտեմբերի 21-ին «Ձին Բեյ» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Արտաշիսյան փողոցում վրաերթի է ենթարկել 19-ամյա երիտասարդի, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հոկտեմբերի 21-ին Արմավիր քաղաքի Երեւանյան փողոցի գազալցակայանի մոտ իրար են բախվել «Տոյոտա Կորոլա» եւ «Օպել» մակնիշի ավտոմեքենաներ. «Տոյոտա Կորոլա»-ի վարորդը տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հոկտեմբերի 21-ին «Օպել Աստրա» մակնիշի ավտոմեքենան Սեւանի Նաիրյան փողոցում բախվել է մեկ այլ «Օպել Աստրա»-ի, ինչի հետեւանքով վերջինիս 2 ուղեւորները մարմնական վնասվածքներով դիմել են հիվանդանոց:

■

Հոկտեմբերի 21-ին «Միցուբիշի» մակնիշի ավտոմեքենան Կոտայքի մարզի Մրգաշեն գյուղի վերջնամասում դուրս է եկել երթեւեկելի գոտուց եւ բախվել քարի. 3 ուղեւոր մարմնական վնասվածքներով դիմել են հիվանդանոց:

■

Հոկտեմբերի 21-ին «Մոսկվիչ-2141» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Չարենցավան-Կարենիս ճանապարհին վրաերթի է ենթարկել 46-ամյա տղամարդու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հոկտեմբերի 22-ին Այնթապ գյուղի Արտաշատյան խճուղում իրար են բախվել «ԲՄՎ-320» եւ «ՎԱԶ-2107» մակնիշի ավտոմեքենաներ, այնուհետեւ «ԲՄՎ-320»-ը բախվել է կայանված «Օպել Վեկտրա» եւ «Օպել Աստրա» մակնիշի ավտոմեքենաների: «Օպել Աստրա»-ում գտնվող 17-ամյա երիտասարդը մարմնական վնասվածքով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հոկտեմբերի 22-ին «Աուդի Ա4» մակնիշի ավտոմեքենայի 25-ամյա վարորդը Արմավիր քաղաքի Հանրապետության փողոցում վրաերթի է ենթարկել 9-ամյա տղայի, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հոկտեմբերի 22-ին Արմավիրի մարզի Հուշակերտ-Նոր Կեսարիա ճանապարհի 1-ին կմ-ին իրար են բախվել «Նիսան» եւ «ՎԱԶ-2106» մակնիշի ավտոմեքենաներ: «ՎԱԶ-2106»-ի վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հոկտեմբերի 22-ին Էջմիածին-Աշտարակ ճանապարհի 2-րդ կմ-ին իրար են բախվել «ԿամԱԶ» եւ «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենաներ: «Մերսեդես»-ի վարորդը եւ ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Հոկտեմբերի 22-ին «ՎԱԶ-2107» մակնիշի ավտոմեքենան Ստեփանավան քաղաքի Բաղրամյան փողոցում բախվել է ճամփեզրին կայանված «ԲՄՎ» մակնիշի ավտոմեքենայի: «ՎԱԶ-2107»-ի վարորդը եւ ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Հոկտեմբերի 22-ին «ԳԱԶ-2410» մակնիշի ավտոմեքենան Տաշիր-Գոգավան ճանապարհի 5-րդ կմ-ին դուրս է եկել հանդիպակաց գոտի եւ բախվել «Օպել Զաֆիրա» մակնիշի ավտոմեքենայի: «Օպել Զաֆիրա»-ի վարորդը եւ ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Հոկտեմբերի 22-ին Գյումրի-Մարմաշեն ճանապարհի 4-րդ կմ-ին իրար են բախվել «Նիսան» եւ «Տոյոտա Քեմրի» մակնիշի ավտոմեքենաներ: «Տոյոտա Քեմրի»-ի 59-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

«Հայրապետական» կապեր

Քրեական օրենսգրքի 132.2 հոդվածը բարեփոխված օրենսդրության նորույթներից է: Այն պատիժ է նախատեսում շահագործման նպատակով երեխային, հոգեկան խանգարման հետեւանքով իր արարքի բնույթն ու նշանակությունն ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձին հավաքագրելու, տեղափոխելու, փոխանցելու, թաքցնելու, ինչպես եւ այդպիսի անձանց շահագործելու կամ շահագործման վիճակի մեջ դնելու, պահելու համար: Օրենքի նախատեսած պատիժը բավական խիստ է՝ յոթից տասը տարի ժամկետով ազատազրկում՝ գույքի բռնագրավմամբ, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից առավելագույնը երեք տարով զրկելով: Պատիժն առավել խիստ է, եթե նույն արարքը կատարվել է երկու կամ ավելի անձանց նկատմամբ, պաշտոնեական դիրքն օգտագործելով, մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, բռնություն գործադրելով կամ առեւանգման միջոցով: Այս դեպքերում պատիժը տասից տասներկու տարի ժամկետով ազատազրկումն է:

Ներկայացվող քրեական գործում քույրը տուժողն է, եղբայրը՝ Ներսես Մինասյանը, մեղադրյալը: Ներսեսը միակ մեղադրյալը չէ. նա կնոջ՝ Անահիտի հետ է մուրացկանության դրդել անչափահաս զարմիկներին ու տնօրինել մուրացկանությամբ հավաքված փողը:

Հոր մահից հետո երեքսենյականոց բնակարանը ժառանգություն մնաց Ներսեսին ու քրոջը՝ Մարիամին: 1998 թվականին Ներսեսը կնոջ ու երեխաների հետ մեկնեց Ռուսաստան: Տասը տարի ապրեցին Կրասնոդարի երկրամասում: Հայաստան վերադարձան 2008 թվականին:

Հայրական տանը քույրը տնավորվել էր ընտանիքով՝ ամուսնու եւ չորս երեխաների հետ: Նույն հարկի տակ տեղավորվեց նաեւ Ներսեսի ընտանիքը: Բայց այդպես երկար ապրել չէին կարող, ուստի քույր ու եղբայր համաձայնության եկան բնակարանը վաճառելու, ամեն մեկն իր մասնաբաժինը վերցնելու եւ ինքնուրույն ապրելու հարցում:

Քարուքանդ տուն էր. վաճառեցին տասնհինգ հազար դոլարով: Գնորդը յոթ հազար դոլարը նախապես տվեց. մնացածը տալու էր սեփականության վկայականն ստանալուց հետո: Բայց որոշակի հարցերով պայմանավորված՝ սեփականաշնորհման գործընթացը ձգձգվում էր, ինչի պատճառով գնորդը հրաժարվեց տունը գնելու մտքից ու պահանջեց վերադարձնել յոթ հազար դոլարը:

Բայց որտեղի՞ց. Ներսեսը չորս հազար դոլարով բնակարանի հետ կապված վճարումներ էր կատարել, երեք հազար դոլարն էլ քրոջ հետ կիսել, ծախսել էին: Հինգ հարյուր դոլար՝ ընդամենը այդքան կարողացավ վերադարձնել. մնացածը խոստացավ տալ բնակարանը վաճառելուց հետո:

Բնակարանը վաճառելու գործը ձգձգվում էր, եւ Ներսեսը չստացված գնորդի հետ պայման կապեց՝ պարտքը մաս-մաս կվճարի Մարիամը: Մինչ այդ՝ համաձայնության եկավ օրավարձով աշխատող քրոջ հետ. օրը երեք հազար դրամով մարել պարտքը: Մարիամը, որ տարբեր տեղերում հավաքարարություն անելով օրը հինգ հազար դրամ էր աշխատում, ամեն օր պարտաճանաչ մարում էր պարտքը:

Իսկ այդ ընթացքում բնակարանի համար նոր գնորդ հայտնվեց: Ներսեսը տասնհինգ հազար դոլար վերցրեց, բայց մտքով չանցկացրեց այդ փողից տալ պարտքի մնացած մասը եւ քրոջն ազատել ծանր հոգսից: Մարիամը շարունակեց մարել պարտքը՝ եղբոր վախից ակնարկ անգամ չանելով տան վաճառքից վերցրած փողի մասին...

Բնակարանը նոր տեր ուներ, եւ Ներսեսի ու Մարիամի ընտանիքները տեղափոխվեցին հարեւանությամբ գտնվող տնակներ:

Քանի որ քրոջը շահագործելն այդքան հեշտ էր, Ներսեսը որոշեց ընդլայնել սահմանները: Կնոջ՝ Անահիտի հետ խելք խելքի տվեցին ու որոշեցին Մարիամի երեխաներին ուղարկել փող մուրալու, մանավանդ, որ նրանք մուրացկանության փորձ ունեին:

Ներսես եւ Անահիտ Մինասյանների գործունեությունը բացահայտեցին ոստիկանության աշխատակիցները:

Նախաքննությունն ավարտվել է: Քրեական գործը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել է դատաքննության:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Ծառահատումներ են բացահայտվել

Ոստիկանության Ճամբարակի բաժնի ծառայողները ապօրինի ծառահատումները կանխելու եւ բացահայտելու նպատակով օրերս իրականացրել են ուժեղացված ծառայություն: Արդյունքում՝ բաժնի սպասարկման տարածքի տարբեր մասերում հայտնաբերվել եւ բաժնի պահպանվող հատուկ տարածք են տեղափոխվել չորս տրանսպորտային միջոց, որոնք բարձված են եղել 10 խմ ավելի փայտանյութով: Վարորդները բեռի օրինականությունը հավաստող փաստաթղթեր չեն ներկայացրել:

Ապօրինի ծառահատումների հանգամանքները պարզելու նպատակով ոստիկանության Ճամբարակի բաժնում նյութեր են նախապատրաստվում:

Հոկտեմբերի 14-ին ոստիկանության Նոյեմբերյանի բաժնի աշխատակիցները ապօրինի ծառահատման դեպքերը կանխելու եւ բացահայտելու նպատակով ուժեղացված ծառայություն իրականացրին: Բաժնի հատուկ պահպանվող տարածք տեղափոխվեց «ՈՒԱԶ» մակնիշի երկու ավտոմեքենա, որոնք բարձված էին 3 խմ փայտանյութով: Վարորդները բեռի օրինականությունը հավաստող որեւէ փաստաթուղթ չեն ներկայացրել:

Փաստով ոստիկանության Նոյեմբերյանի բաժնում նյութեր են նախապատրաստվում:

Ամրաշրջանառության շրթան բացահայտվեց

Օրեր առաջ ոստիկանության Նոր Նորքի բաժնի քրեական հետախույզները ապօրինի թմրաշրջանառության վերաբերյալ տեղեկություններ ստացան, որոնց հիման վրա սկսեցին օպերատիվ-հետախուզական միջոցառումներ ձեռնարկել: Արդյունքում՝ Մաշտոցի պողոտայում հայտնաբերեցին 19-ամյա մի երիտասարդի՝ ապօրինի թմրամիջոց պահելու, օգտագործելու եւ իրացնելու կասկածանքով: Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվեց 7 գրամից ավելի մարիխուանա:

Հետագա միջոցառումներով՝ Նոր Նորքի քրեական հետախույզները փաստական տվյալներ ձեռք բերեցին, որ բերման ենթարկվածը թմրամիջոցի նմանվող զանգվածը 20 հազար դրամով ձեռք էր բերել մայրաքաղաքի 33-ամյա մի բնակչից: Նա եւս հայտնաբերվեց ու բերման ենթարկվեց բաժին: Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվեցին տասից ավելի մարիխուանայի նմանվող զանգվածներով փաթեթներ՝ ընդհանուր 65 գրամից ավելի քաշով:

Հետախուզական միջոցառումները շարունակվեցին: Արդյունքում՝ նոր տեղեկություններ ստացվեցին, որ տղամարդու խուզարկությամբ հայտնաբերված մարիխուանայի փաթեթները, յուրաքանչյուրը 10 հազար դրամով, ձեռք է բերել դարձյալ երեւանաբնակ 33-ամյա մի տղամարդուց: Նա նույնպես հայտնաբերվեց ու բերման ենթարկվեց բաժին: Հարուցված քրեական գործի շրջանակներում խուզարկվեց նրա ավտոմեքենան: Հայտնաբերվեցին ընդհանուր 80 գրամից ավելի դեղնականաչավուն զանգվածներ եւ 5 գրամից ավելի բուսական զանգված:

Օպերատիվ-հետախուզական միջոցառումների եւ քննչական գործողությունների արդյունքում պարզվեց, որ բերման ենթարկվածը թմրամիջոցի նմանվող զանգվածները ձեռք է բերել Քանաքեռի 49-ամյա բնակչից: Դատարանի որոշմամբ խուզարկվեց նաեւ նրա տունը: Հայտնաբերվեցին կանեփի սերմերի նմանվող զանգված, շագանակագույն եւ կանաչավուն հետքերով տարաներ եւ մանրացված-չորացված յուրահատուկ հոտով, 4 գրամից ավելի քաշով զանգված:

Հարուցված քրեական գործի նախաքննությունը շարունակվում է:

Մ. Ս.

Հայտնաբերվածը կոկաին էր

ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչության եւ ԱԱՄ աշխատակիցները, իրացնելով ստացված օպերատիվ տվյալները, հոկտեմբերի 10-ին մայրաքաղաքի Նալբանդյան փողոցում հայտնաբերեցին ու ոստիկանության Կենտրոնական բաժին բերման ենթարկեցին Երեւանի բնակիչ, 29-ամյա մի երիտասարդի: Կասկածանքը՝ մաքսանենգ ճանապարհով ապօրինի թմրամիջոց Հայաստան ներկրելը, պահելը, օգտագործելն ու իրացնելն էր:

Բերման ենթարկվածի անձնական խուզարկությամբ հայտնաբերվեցին տարբեր դեղահաբեր, կոկաինի նմանվող զանգված, մեթամֆետամին:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ: Օպերատիվ-քննչական միջոցառումները շարունակվում են:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Կոռուպցիա մարզահամերգայինում

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության կոռուպցիայի եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման վարչությունում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ 2007-2012 թթ. Նոյեմբերյան քաղաքի մարզահամալիրի նորոգման եւ շինարարական աշխատանքների ընթացքում թույլ են տրվել մի շարք չարաշահումներ:

Նյութերի նախապատրաստման ընթացքում ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության, Տավուշի մարզային վարչության եւ Նոյեմբերյանի բաժնի ծառայողներն իրականացրել են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ: Արդյունքում՝ փաստական տվյալներ են ձեռք բերվել, որ 2007-2012 թվականներին պետական բյուջեի ֆինանսավորմամբ Նոյեմբերյանի մարզահամալիրում երկու փուլով կատարված նորոգման եւ շինարարական աշխատանքների ընթացքում կապալառու կազմակերպության կողմից սահմանված կարգով չեն իրականացվել մարզադաշտի նախագծով սահմանված բազալտե խճի եւ ավազե ենթաշերտերը, ինչպես եւ դրանից բխող կատարողական ակտով սահմանված այլ շինարարական աշխատանքներ: Արդյունքում՝ կապալառու կազմակերպության կողմից յուրացման միջոցով հափշտակվել է չորս միլիոն դրամ:

Հարուցվել է քրեական գործ:

Նարեկ ՄԱՐԳՍՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Հանցավորության կանխարգելում

Հանցագործություն ու հանցագործներ եղել են միշտ, բոլոր դարերում, բոլոր ժամանակներում: Հանցագործությունների կանխարգելման խնդիրն առաջացել է վաղ անցյալում: Չնայած անցյալում դրան այնքան էլ կարեւորություն չի տրվել, քանզի հնագույն ժամանակներում հանցագործության էությունը լիովին չէր բացահայտվել, եւ հանցանք գործելն ընդունված էր համարել չար, դիվային ուժերի դրսեւորում: Ժամանակի հետ այդ տեսակետը բացառվեց եւ, ի վերջո, հաստատվեց, որ երեւույթը ունի սոցիալական արմատներ: Հենց այս տեսությունն էլ հնարավորություն տվեց հասկանալու, որ յուրաքանչյուր հանցագործություն նախապատրաստության որոշակի փուլ ունի, եւ հանցավորության դեմ արդյունավետ պայքարի լավագույն միջոցը կանխարգելումն է:

Հանցավորության կանխարգելման անհրաժեշտության մասին հիշատակություններ կան վաղ ժամանակների փիլիսոփաների աշխատություններում: Կանխարգելմանն անդրադարձել են անգամ Պլատոնն ու Արիստոտելը: Այսպես, Պլատոնը հանցավորության հնարավոր կանխարգելման մասին խոսում է համաշխարհային ներդաշնակության եւ մարդու ներքին ներդաշնակության մասին տեսություններում՝ կարծիք հայտնելով, որ այդ ներդաշնակությունը խախտվում է հանցագործության փաստով: Հանցագործությունն, ընդ որում, դիտվում է հանցագործ հոգու հիվանդություն եւ պետության հիվանդություն, որը պետք է «բուժի» հենց պետությունը: Օրենքները պետության մեջ պետք է լինեն այնպիսին, որ հանցավոր մտքից հետ պահեն բոլոր նրանց, ովքեր կարող են հանցագործ դառնալ:

Արիստոտելն իր աշխատություններում որպես կանխարգելիչ միջոց նշում է հանցավորության հոգեկան հարկադրանքի կիրառման հնարավորության մասին: Որպես հոգեկան հարկադրանքի մեխանիզմներ հանդես են գալիս օրենքն ու պատժի սպառնալիքը:

Հնարավոր է, որ անտիկ մտածողների դատողությունները փոքր-ինչ «միամիտ» են, սակայն դրանք անկարելի է չգնահատել: Ավելին, սրանք կարելի է համարել կանխարգելման հարցի վերաբերյալ առաջին դատողություններ:

Դարեր շարունակ հանցավորության կանխարգելման խնդիրը մարդկության կողմից մոռացության է տրվել, եւ առաջնային պլան է մղվել հանցավորության դեմ պայքարի ռեպրեսիվ մեթոդը, որը հատկապես դաժան բնույթ ստացավ Միջին դարերում: Դրա վառ ապացույցն է 13-րդ դարում գործող «Սաքսոնյան հայելի» անունը ստացած քրեական օրենսդրությունը, որը կոչ էր անում՝ «Գողին կախաղան հանել, կողոպտիչին, բռնաբարողին, անհավատարիմ ամուսիններին գլխատել, կախարդությունների կամ թունավորումների հետ գործ ունեցողներին այրել խարույկի վրա»:

Հանցագործությունների կանխարգելման անհրաժեշտության խնդիրը կրկին օրակարգ մտավ նորագույն ժամանակներում: Անգլիացի մատերիալիստ Ջոն Լոկի տեսությամբ՝ հանցագործությունների կանխարգելումը սերտորեն կապվում է բարոյականության եւ դաստիարակության հետ:

Ըստ նրա՝ չարին կարելի է հաղթել միայն դաստիարակությունը ճիշտ կազմակերպելով: Այս տեսությունը զարգացրել են նաեւ 18-րդ դարի ֆրանսիացի մտածողներ Հոլբախը, Վոլտերը, Ռուսոն եւ մյուսները: Նրանք հաստատում են այն գաղափարը, որ մարդը բնությունից չար չի ծնվում, այլ այդպիսին դառնում է սխալ դաստիարակության հետեւանքով: Հիշատակենք նաեւ 18-րդ դարի մեկ այլ խոշորագույն մտածողի՝ Շարլ Լուի Մոնտեսքյոյին, որն իր գործերում ավելի մեծ նշանակություն է տվել կանխարգելմանը:

Կանխարգելման խնդրին առաջին անգամ առավել ընդգրկուն եւ գիտական մոտեցում է ցուցաբերել իտալացի նշանավոր լուսավորիչ եւ իրավաբան Չեզարե Բեկարիան: Իր հանրահայտ աշխատության մեջ նա փորձել է բնորոշել հանցավորությունը, փորձ է արել նաեւ գնահատել պետության կողմից կիրառվող պատժի եւ կանխարգելման միջոցների համակարգերը, հետազոտել է պատժի նախապատմությունը եւ այլն: Խոսելով հանցագործությունների կանխարգելման մասին, շարունակելով Մոնտեսքյոյի միտքը, նա նշում է, որ ավելի ճիշտ եւ արդյունավետ է հանցագործությունները կանխարգելելը, եւ դրանում մեծ է լավ օրենսդրության նշանակությունը: Միեւնույն ժամանակ, առաջարկում է անձանց վերահսկելու գաղափարը, որը հանդես էր գալու որպես անձին հանցավոր նկրտումներից հետ պահելու միջոց:

Ըստ Բեկարիայի՝ պետությունն ու ընտանիքը պետք է դաստիարակության եւ վերահսկման գործում հանդես գան որպես մեկ միասնական համակարգ:

Հետագայում կանխարգելման գաղափարն իրենց աշխատություններում շոշափել են գիտնականներ Է. Կաբեն, Ա. Քեթլը, Է. Ֆերրին:

Ն. ԱՌԱՔԵԿՅԱՆ

Կեղծ փաստաթղթեր՝ վարկ վերցնելու համար

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության 3-րդ վարչությունում օպերատիվ տվյալներ էին ստացվել, որ անհայտ անձինք վարկ վերցնելու նպատակով բանկեր են ներկայացնում ոստիկանության ծառայողի կեղծ վկայական ու աշխատավարձի չափի վերաբերյալ կեղծ փաստաթղթեր:

Տեղեկությունների հիման վրա ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվեցին այդ անձանց ինքնությունը: Նրանք վերցվեցին ոստիկանների օպերատիվ տեսադաշտ: Փաստական տվյալներ ձեռք բերվեցին, որ տղամարդիկ կեղծ փաստաթղթերը պատրաստել են նախնական համաձայնությամբ՝ ֆինանսական գործարքներ կատարելու համար: Ոստիկանության ծառայողների տեղեկություններով՝ նրանք հոկտեմբերի 11-ին Արաբկիր վարչական շրջանում պետք է հանդիպեին՝ հերթական գործարքը կատարելու: Հանդիպեցին, բայց գործարքը չկատարվեց, քանի որ ոստիկանության ծառայողները նրանց բերման ենթարկեցին Արաբկիրի բաժին:

Հարուցված քրեական գործի շրջանակներում խուզարկվեց նրանցից մեկի վարած «BMW» մակնիշի ավտոմեքենան, որի սրահում հայտնաբերվեցին ոստիկանության ծառայողի կեղծ վկայական, աշխատավարձի մասին կեղծ փաստաթուղթ եւ այլն:

Հարուցվել է քրեական գործ:

Հանգամանքները պարզվում են:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Բռնկեցին թմրամիջոց պատրաստելիս

Ոստիկանությունը շարունակում է թմրանյութերի անօրինական շրջանառության եւ օգտագործման դեմ հետեւողական պայքարը: Օրերս հերթական դեպքը բացահայտեցին Գյումրիի ոստիկանները:

Հոկտեմբերի 1-ին ոստիկանության Մուշի եւ Կումայրիի բաժնի ծառայողները Գարեգին Նժդեհի փողոցի կիսաքանդ շինության մեջ ապօրինի թմրամիջոց պատրաստելու եւ օգտագործելու պահին հայտնաբերեցին Բորյան փողոցի 33-ամյա բնակչին:

Շինության զննությամբ՝ ոստիկանները հայտնաբերեցին յուրահատուկ հոտ ունեցող հեղուկով լի փարաներ, պիպոլֆեն գրառմամբ ապակե սրվակ, պիրալգին գրառմամբ դեղահաբերի դատարկ ժապավեն, ներարկիչներ, որոնցից մեկում առկա էր 3,6 մլգ դեղնավուն հեղուկ, յոդի դատարկ սրվակ եւ թմրանյութի պատրաստման համար անհրաժեշտ այլ պարագաներ:

Կասկածվողը հայտնել է, որ ներարկիչի մեջինը թմրանյութ է, ինքն է պատրաստել. մի մասն օգտագործել է՝ մնացածը պահել հետագայում ներարկվելու համար:

Նշանակվել է դատաքիմիական փորձաքննություն:

Քննությունը շարունակվում է:

Գոռ ՎԱՆՅԱՆ

Օպերատիվ

Հայտնաբերվել են հետախուզվողներ

Հոկտեմբերի 18-ին ոստիկանության Տաշիրի բաժնի ծառայողները Լոռու մարզի Գոգավանի սահմանային անցակետում հայտնաբերել եւ բաժին բերման են ենթարկել Արագածոտնի մարզի Մաստարա գյուղի 38-ամյա մի բնակչի, որը հոկտեմբերի 4-ից ՌԴ ՆԳՆ Ստավրոպոլի իրավապահների կողմից հետախուզվում էր վարչական պատասխանատվության ենթարկված անձի կողմից ճանապարհային երթեւեկության կանոնները խախտելու մեղադրանքով:

◆

Հոկտեմբերի 18-ին ոստիկանության Չարենցավանի բաժնի ծառայողների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ «Զվարթնոց» օդանավակայանում հայտնաբերվել եւ բաժին բերման է ենթարկվել Չարենցավանի 33-ամյա մի բնակիչ, որը հետախուզվում էր խուլիգանության մեղադրանքով:

◆

Վաղարշապատի քրեական հետախույզները, ստացված օպերատիվ տվյալներն իրացնելիս, հոկտեմբերի 19-ին Մոսկվա-Երեւան չվերթի ժամանումից հետո «Զվարթնոց» օդանավակայանի ժամանման սրահից բերման են ենթարկել ազգությամբ հայ, Ուկրաինայի քաղաքացի, 34-ամյա տղամարդու, որը ոստիկանության Արմավիրի բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 117 հոդվածի մեղադրանքով:

◆

Հոկտեմբերի 19-ին Վաղարշապատի քրեական հետախույզների բացատրական աշխատանքի շնորհիվ Սոչի-Երեւան չվերթով Հայաստան է վերադարձել եւ Վաղարշապատի բաժին ներկայացել Արաքս գյուղի 38-ամյա մի բնակիչ, որը հետախուզվում էր քրեական օրենսգրքի 325 հոդվածի մեղադրանքով:

◆

Հոկտեմբերի 19-ին ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ Նուրսուլթան-Երեւան չվերթի ինքնաթիռի ժամանումից հետո բերման է ենթարկվել ՌԴ քաղաքացի, 56-ամյա մի տղամարդ, որը հետախուզվում էր ՌԴ ՆԳՆ Օմսկի մարզի իրավապահների կողմից՝ ՌԴ քրեական օրենսգրքի 282 հոդվածի մեղադրանքով:

◆

Հոկտեմբերի 19-ին Իրանից ժամանելիս Հայաստանի պետական սահմանը հատելիս Ագարակի սահմանային անցակետի ծառայողները հսկիչ անցագրային կետից բերման են ենթարկել Նորվեգիայի Թագավորության երկու քաղաքացու՝ 26 եւ 36 տարեկան: Նրանք այս տարվա օգոստոսի 2-ից Նորվեգիայի Թագավորության կողմից միջազգային կարգով հետախուզվում էին իրենց պետության քրեական օրենսգրքի 231 եւ 232 հոդվածների մեղադրանքով:

◆

Մարաշի բաժանմունքի քրեական հետախույզների բացատրական աշխատանքի շնորհիվ հոկտեմբերի 21-ին Մինսկ-Երեւան չվերթի ինքնաթիռի ժամանումից հետո կամավոր բաժանմունք է ներկայացել Կրիվոյի փողոցի բնակիչ, 24-ամյա մի երիտասարդ, որը հետախուզվում էր քրեական օրենսգրքի 117 հոդվածի մեղադրանքով:

◆

Վաղարշապատի քրեական հետախույզների բացատրական աշխատանքի շնորհիվ հոկտեմբերի 20-ին կամավոր բաժին է ներկայացել Նոր Խարբերդի բնակիչ, 28-ամյա մի տղամարդ, որը Երեւանի բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 177 հոդվածի մեղադրանքով:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Լիբիա
«...թերթ» / Խայթող միջատ
«Սասունցի Դավիթ» / Վճիռ
Դեղձի չիր
... Վեգներ
Արագիլների ընտանիքի թռչուն
Արքիմեդի հայրենի քաղաքը
... Բլոխին
Գետ, Ռուսաստան
Ալբանիայի դրամ
Հացազգի բույս
Իբն Սինա
Փետրաձեւ տերեւներով թուփ
«Ծառերը կանգնած են մահանում»
Որեւէ բանի պահանջ / Հայկ. տառ
Ամբողջի հատված / Ոստ
Վիտորիոդե ... / Շրջիկ նկարիչ
ՀՀ ֆուտ. ակումբ / Փոխադրամիջոց
... Խնկոյան
«Վշտոտ» ծառ / Սեռ
Ամուրի վտակ
Աստղ, Մեծ արջ / Լեհ բանաստեղծ
Իտալացի գրող, սցենարիստ
Հնում ուսուցչապետ
Միրգ
Լուսանկարչ. սարք / Ֆրանսիսկո ...
Աֆրիկյան կենդանի / Շեփոր
Նյութի փոքրագույն մասնիկ
Հավաքարար
Կենդանու ձագ
Ժամանակի միավոր
Ռուս պարուհի / Անապատ, Հար. Ամեր.
Կոշտ գործվածք / Թռչնախումբ
Հայկ. աստվածություն / Երկնոլորտի կետ
Հողի մշակում / Պատերազմի ...
Թեւավոր նժույգ / Ֆրանս. մանրէաբան
Երաշխիք / Ադամ
Ճապոն. քաղաք
Ֆա, սոլ / Ռոկոկո
Ապակե, մետաղե տարա
Անիոն / Երկու բարձունքի միջեւ
Գիյոմ ...
Բահրեյն
ՃԿՈՒՅԹ / ՌԴ հեռուստաալիք
Մոլդավ. ժող. պար
Բրուտագործ. նյութ / Արու ծի
Ուստիան
Լա Սկալա
Թագոր, վեպ / Դերանուն
Սափոր / Մակույկի կողին
Գրական ժանր
Պատի վառարան
Բվեճ / Երգահան եւ քիմիկոս
Գավառ, Տուրուբերան
Սեմ, Հաբեթ / ... Պուչինի
Հրացան / Եզան վզի փայտե ծող
Խորխորատ
Գավառապետ, իշխան / Էլեոնորա ...
... Լոլորիջիդա
Սրունքի ոսկոր
Զորություն
Ճաշատեսակ
Արթյուր ... / Հեռախոս
Ավտոմեք. մաս
... Կոկտո / Կամարաձեւ գիծ
Լվացքի ներկայություն
... տաղանդ
Լատիշ քանդակագործ / Ռավել
Բարձրագույն նվաճում
Ցեմենտ, գաջ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հարգելի քաղաքացիներ՝

ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը երաշխավորում է ձեր բնակարանների եւ ամառանոցների անվտանգությունը, եթե դրանց պահպանությունը վստահեք ձեր բնակության վայրի պահպանության ստորաբաժանմանը:

Պահպանության համար գանձվելիք վարձավճարները անհամեմատ մատչելի են:

Մինչեւ 120ք/մ մակերես ունեցող բնակարանների, տների, ամառանոցների տեխնիկական միջոցների տեղադրման աշխատանքները կկատարվեն անվճար, իսկ պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 5000-15000 դրամ:

120 ք/մ-ից ավելի մակերես ունեցող տարածքների համար պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 10000-30000 դրամ:

Մանրամասների համար կարող եք զանգահարել 57-19-22 (Կենտրոն համայնք), 39-00-26 (Մալաթիա համայնք), 57-02-14 (Էրեբունու համայնք), 35-14-21 (Մաշտոց համայնք), 63-05-74 (Նոր Նորք համայնք), 44-21-23 (Շենգավիթ համայնք), 23-82-00 (Արաբկիր համայնք), 24-10-41 (Քանաքեռ-Զեյթուն համայնք):

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Սպասագուշակ

25.10 - 31.10

Խոյ - Եթե ժամանակ չկորցնեք, կարող եք լուծում տալ կարեւոր հարցերի: Գործնական հանդիպումները վատ չեն անցնի:

Ցուլ - Կկարողանաք լուծել ծառացած խնդիրները, հիանալի շաբաթ է նոր գործարքներ կնքելու համար:

Երկվորյակ - Իրադարձություններով լեցուն շաբաթ է սպասում: Չի բացառվում, որ ստիպված լինեք զբաղվել ոչ հաճելի գործերով:

Խեցգետին - Պետք է զգույշ գործել: Խորհուրդ չի տրվում նոր գործ սկսել, պետք է վստահել սեփական ուժերին:

Առյուծ - Հիանալի շաբաթ է հանդիպումների, գործնական համաձայնությունների համար: Արագ լեզու կգտնեք ղեկավարության հետ:

Կույս - Մասնագիտական տեսանկյունից այնքան էլ բարենպաստ շաբաթ չէ: Ազատ ժամանակը կարող եք անցկացնել կինոթատրոնում, համերգասրահում:

Կշեռք - Նպատակասլացությունն ու վճռականությունը թույլ կտան հասնել լուրջ հաջողությունների. դժվարությունները չեն խանգարի:

Կարիճ - Հաճախ այնպես չես վարվում, ինչպես սպասում են մտերիմները, ինչը կարող է մոլորության մեջ գցել հակառակորդներին:

Աղեղնավոր - Միգուցե չկարողանաք հասնել Ձեր նպատակներին, սակայն ցանկալի է պահպանել հանգստություն: Խուսափեք չնախատեսված ծախսերից:

Այծեղջյուր - Կկարողանաք ցույց տալ Ձեր իրական հնարավորությունները: Չի բացառվում հաջողություններ ունենաք գործնական ասպարեզում:

Ջրհոս - Խորհուրդ չի տրվում կարեւոր հանդիպումներ նշանակել: Կարող եք լուծում տալ անձնական խնդիրներին:

Ձուկ - Ձեզ ավելի հանգիստ կզգաք: Չի բացառվում գործնական հարաբերությունները վերածվեն անձնականի:

Փորձեք լուծել

Խնդիր N1



Սպիտակները սկսում են եւ հաղթում 2 քայլից

Խնդիր N2



Սպիտակները սկսում են եւ հաղթում 3 քայլից

Նախորդ խնդիրների պատասխանները

Խնդիր N1 1.f4-h6 h2:f4 2.h6:f8x

Խնդիր N2 1.g1-f2 g3:e1 2.c3-b4 e1:c3 3.b4:b4x

Պատրաստեց
Նշան ԱԼԱՎԵՐԴՅԱՆԸ
Շաշկու Հայաստանի չեմպիոն, IDF վարպետ, սպորտի վարպետ

Նախորդ համարի սկանվորդի պատասխանները

«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Աթաբեկյան:
Գրանցման վկայական՝ 27312002739: Տրվել է՝ 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 24.10.2019 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 6950:
Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հենակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը «02»-ին պարտադիր է:
Չպատվիրված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում: Խմբագրությունը հեղինակների հետ գրագրություն չի վարում: Գովազդի պատասխանատուն պատվիրատուն է: